

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արարատի մարզի «Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկա առարկայի ուսուցչի /12 ժամ/ թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում՝

1) դիմում (Ձև 1),

2) բարձրագույն կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ),

3) անձնագիր,

4) աշխատանքային գրքույկ,

5) ինքնակենսագրություն (Ձև 4),

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ,

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),

10) որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

**Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:**

**Փաստաթղթերն ընդունվում են հուլիսի 29 -ից օգոստոսի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:**

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 27-ին ժամը 14<sup>00</sup>-ին, Արարատի մարզի Արարատ քաղաքի Պարույր Սևակի անվան N2 հիմնական դպրոցում:

Հասցե ք. Արարատ, Շահումյան 16, տեղեկությունների համար զանգահարել (0234) 4-12-09, (091)552881: